ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՊՀ-ի ներբուհական դրամաշնորհի շրջանակում իրականացվող «Բնագիտական առարկաների «Դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրերի բարելավում՝ «Ինտեգրված թեմատիկ միավորներ» թեմայի ներառումով» թեմայի

Վերոնշյալ թեմայով իրականացվող 1-ամյա ծրագրի աշխատանքները մեկնարկեցին 2017 թ. մարտի 1-ից՝ բուհի հետ կնքված ***N 02- SGI-2017 թ, «01» մարտի 2017 թ.*** պայմանագրի հիման վրա:

Նախատեսված բոլոր ժամանակահատվածների աշխատանքները ծրագրի թիմն իրականացրել է պատշաճ մակարդակով և ժամանակին: Մասնավորապես,

- Առաջին ամսում թիմի անդամների հետ կազմակերպվել են պարբերական հանդիպումներ, որոնց ընթացքում մեկնաբանվել է ծրագրի էությունը, կատարվել է պարտականությունների բաշխում, մշակվել է աշխատանքային ժամանակացույց:
- Ներկայացվել է զեկուցագիր, ցուցաբերվել է հետևողականություն՝ ժամանակին բուհի կողմից ծրագիրը անհրաժեշտ սարքերով ու նյութերով ապահովելու համար:
- Մշակվել է 3-օրյա դասընթացի ծրագիր և ստեղծվել դասընթացի կազմակերպման մոդուլ՝ տեսական ու գործնական աշխատանքներով:
- Դասընթացին մասնակցության հայտարարությունն ու հայտը ուղարկվել է մարզի բոլոր դպրոցների, ուսանողական խորհրդի էլեկտրոնային հասցեներին, տեղադրվել է բուհի կայքում, բաժանվել բուհի բոլոր ֆակուլտետներին ու ամբիոններին:
- Ստեղծվել է bnaget2017@mail.ru կայքը՝ մասնակիցների հետ էլեկտրոնային հաղորդակցության ապահովման, գրանցումների համար:
- Ստեղծվել է մասնակիցների գրանցամատյան՝ ըստ մասնագիտությունների բաշխվածության:
- Անցկացվել է 3-օրյա դասընթաց՝ ապրիլի 1-ին, 22-ին և 29-ին, ՇՊՀ-ի դահլիճում: Դասընթացը եզրափակվել է ամփոփիչ թեստային աշխատանքով և դասընթացի մասին կարծիքի թերթիկի լրացումով:
- Մայիսի 13-ին, դասընթացի 65 մասնակիցների (ընդհանուր 102 մասնակիցներից միայն 65-ին, որոնք ներկայացրել են ինքնուրույն անհատական աշխատանքներ՝ ինտեգրված թեմատիկ միավորի պահանջներին համապատասխան առաջադրանքներ և ինտեգրված դասի պլան՝ <<Ջրոլորտ>> թեմայով) հանձնվել են վկայականներ, պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա համագործակցության համար:
- Վերլուծվել են դասընթացի մասին ունկնդիրների կարծիքների թերթիկները և ամփոփիչ թեստային աշխատանքները:

- Առաջին եռամսյակում մշակվել է տպագրության համար նախատեսվող առաջին հոդվածի թեման ու նախագիծը:

- Յուրաքանչյուր եռամսյակի հաշվետվության ներկայացումից հետո մշակվել են հաջորդ եռամսյակի աշխատանքային ժամանակացույցը, հստակեցվել են անդամների հանձնարարականները:

- Երկրորդ եռամսյակում, համաձայն աշխատանքային պլանի, թիմի անդամները հանձնարարությունների կատարման ընթացքում համագործակցել են ենթախմբերի անդամ-ուսուցիչների հետ, մշակել են ինտեգրացված ուսուցման դասի պլաններ՝ համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ: Մասնավորապես՝

1) Թիմի անդամ Ավագյան Կարինե - թիվ 15 դպրոցի ուսուցիչ Ք. Մարկոսյանի և ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարանի ուսուցիչ Լ. Մացոյանի հետ համագործակցել են <<Ջրի որակի որոշում>> թեմայով գործնական դասի պլանի ստեղծման աշխատանքներ իրականացնելիս: Ստեղծել են նաև հետաքրքրաշարժ նյութերի, փորձերի, բնագիտական մտածողությամբ գեղարվեստական ստեղծագործությունների բանկ:

2) Թիմի անդամ Աիդա Ամազարյանը՝ թիվ 27 դպրոցի ուսուցիչ Ն. Սիմոնյանի, 23 դպրոցի ուսուցիչ, դասվար Մ. Նալբանդյանի հետ ստեղծել են տարրական դպրոցի 3-րդ դասարանում ուսումնասիրվող <<Կաթիլ>> ինտեգրացված դասի պլան: Իսկ Ա. Ամազարյանը բուհի բնագիտական մասնագիտություններ ուսումնասիրող ուսանողների համար պատրաստել է <<Համաշխարհային օվկիանոս>> ինտեգրացված դասի պլանը, ինչպես նաև հանելուկների, աշխարհագրական խաղերի ու ռեբուսների, բնագիտական գիտելիքներ պարունակող գեղարվեստական ստեղծագործությունների բանկ:

3) Թիմի անդամ Հռիփսիմե Միքայելյանը համագործակցել է կենսաբանություն մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Նազելի Սահակյանի և կենսաբանություն հեռակա 5-րդ կուրսի ուսանող (այժմ Անուշավան գյուղի ուսուցիչ) Լենա Գրիգորյանի հետ և ստեղծել են <<Ջրոլորտ>> ինտեգրացված թեմատիկ միավորի առաջնային ու երկրորդային առարկայախմբերի հիմնական հասկացությունների ցանցը, հասկացությունների իմացությունը ստուգող հարցեր, կազմել են թեմայի ուսուցման և սովորողի գիտելիք, կարողություն-հմտությունների ստուգման տարբեր առաջադրանքներ, վիկտորինայի հարցեր, ստեղծել են <<Ամեն ինչ ջրի մասին>> ամփոփիչ դասի պլան, <<Ատլանտյան օվկիանոս>> ինտեգրացված դասի ուսուցման պլան, <<Ջրոլորտ>> ԻԹՄ-ի ամփոփիչ <Խաղ-վիկտորինայի>> պլան, թեմատիկ ամփոփիչ թեստ՝ <<Ջրի համաշխարհայինշրջապտույտը>> թեմայի վերաբերյալ, ինչպես նաև խաղերի, առակների, հանելուկների, ասացվածքների ու դարձվածքների բանկ: Նշված բոլոր դասերը կազմակերպել են թից 3-րդ ավագ դպրոցում և բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբան 1-ին և 3-րդ կուրսերում:

4) 1-3 կետերում նշված աշխատանքերի մի մասը մշակվելուց և խմբագրվելուց հետո ընդգրկվել են ծրագրի ամփոփիչ ձեռնարկում:

- Պարբերաբար քննարկման են ներկայացվել ընթացիկ աշխատանքները, բացահայտվել են սխալները, թերությունները, ուղղորդվել են աշխատանքների հետագա ընթացքը:

- Ծրագրի ղեկավարի կողմից տրամադրված մասնագիտական օգնության արդյունքում դասընթացի մասնակից ուսուցիչները կազմակերպել են ինտեգրացված դասեր: Մասնավորապես Գյումրու թիվ 15 դպրոցում անցկացվել է <<Մարդու ծագումը>> ինտեգրացված դասը՝ կենսաբանության ուսուցչուհի Ս. Սարգսյանի և պատմության ուսուցչուհի Լ. Գրքիկյանի կողմից, և Անուշավան գյուղի փոխարինող ուսուցչուհի Լենա Գրիգորյանի կողմից 25.11.2017-ին <<Զգայարաններ>> թեմայով ամփոփիչ ինտեգրացված դասը՝ հանրույթի, հրավիրված դասախոսների և այլ դպրոցների ուսուցիչների ու աշակերտների ներկայությամբ, որոնց համար դասից հետո <<Ինտեգրացված ուսուցում>> թեմայով սեմինար-խորհրդակցություն է անցկացվել ծրագրի ղեկավարի և անդամների կողմից:

- Տպագրվել է <<Ինտեգրացված ուսուցման առանձնահատկությունները>> հոդվածը՝ Բնագետ 1, 2017 էջ 23-28:

- Նախապատրաստվել և <<Մանկավարժություն>> հանդեսում տպագրելու համար գրախոսման է ուղարկվել <<Ինտեգրացված դասը որպես ուսուցման նորացման ուղի>> թեմայով աշխատանքը, որը վերցվել է տպագրության 2018թ. տարվա երկրորդ կեսի համարներից մեկում՝ համաձայն ամսագրի պատասխանատու քարտուղար Ս.Գալոյանի ստորագրությամբ տեղեկանքի:

- «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» 29-30 սեպտեմբերի 2017թ. համահայկական գիտաժողովին զեկուցման համար ուղարկվել է <<Ինտեգրացված դասի պլանավորման մոտեցումներ>> թեմայով աշխատանքը՝ համապատասխան հայտով:

- Նախագծվել է ծրագրի ավարտին աշխատանքները ամփոփող ձեռնարկի կառուցվածքային բովանդակությունը, շարունակվել է ձեռնարկի ստեղծման համար նյութերի հավաքումը:

- Երրորդ եռամսյակին գրախոսությունից հետո երաշխավորված <<Ինտեգրացված դասի պլանավորման մոտեցումներ>>թեմայով աշխատանքը 01.10.2017 թ.-ին զեկուցվել է Երևանի Հայ-Սլավոնական համալսարանում անցկացված <<Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ>> համահայկական 5-րդ գիտաժողովին, որը տպագրվել է 2018 թ. հունվարին:

- Գորիսի պետական համալսարանում 05.10.2017թ. ՈՒԳԸ նստաշրջանում ներկայացվել և տպագրության է վերցվել նախագծի թիմի անդամ, կենսաբանություն 4-

րդ կուրսի ուսանողուհի Հ. Միքայելյանի զեկուցումը՝ <<Ինտեգրացված ուսուցման նպատակներն ու խնդիրները>> թեմայով:

- Տպագրության համար նախապատրաստվում է <<Տարբեր առաջադրանքների կիրառական նշանակությունները ինտեգրացված դասեր պլանավորելիս>> աշխատանքը, որը արդեն դուրս է ծրագրի պայմանագրային պարտավորությունից:

- ՇՊՀ-ի թիվ 3 ավագ դպրոցում մանկավարժական պրակտիկայի անցկացման ընթացքում՝ 08.12.2017-ին <<Միայն ջրի մասին>> բնագիտական գիտելիքների խաչմերուկում ինտեգրացված դաս է կազմակերպվել կենսաքիմիա հոսքի 10-րդ դասարանում (*մեկ շաբաթով պրակտիկայի հետաձգման պատճառով նոյեմբերի փոխարեն դասն անցկացվել է դեկտեմբերին*): Դասի կազմակերպիչ ու անցկացման պատասխանատու՝ ԲՄ ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի պրակտիկանտ, ծրագրի թիմի անդամ՝ Հռիփսիմե Միքայելյան: Դասավանդող ուսուցիչ՝ Գոհար Ածիկյան:

- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրություն մասնագիտության 2-րդ կուրսում 06.12.2017թ. տարբեր մասնագիտության ուսանողների մասնակցությամբ՝ այլ կուրսերի ուսանողների ներգրավումով (աշխ. 3-րդ, հեռակա աշխ.2-րդ, մագ. 1-ին, դեղ. 3-րդ և դեղ. 4-րդ) կազմակերպվել է <<Համաշխարհային օվկիանոս>> ինտեգրացված բաց դաս: Պատասխանատու՝ նախագծի թիմի անդամ Ա.Ամազարյան:

- 2017-2018 ուստարում Տ/Մ 4-րդ կուրսի <<Ես և շրջակա աշխարհը>>, ինչպես նաև ՆԴ 4-րդ կուրսի <<Բնություն և բնության հետ ծանոթացման մեթոդիկա>> դասընթացներում ներառվել և ուսուցանվել է <<Ինտեգրացված ուսուցում>> թեման: Դասախոս՝ Ա.Ամազարյան,

- Տ/Մ 4-րդ կուրսում <<Ջուր>> թեմայի վերաբերյալ տարբեր անհատական աշխատանքների են կատարվել: Դասախոս՝ Ա.Ամազարյան,

- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում տարբեր մասնագիտության ուսանողների մասնակցությամբ՝ ուսանողների միջազգային օրվան նվիրված կազմակերպվել և անցկացվել է ինտեգրացված ուսուցման տարրերի կիրառումով (թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների ծագման, դրանց խորհրդավորությունների մասին առասպելների, լեգենդների, առակ-ասացվածքների, տարածման, բուժական և գեղագիտական կիրառությունների և այլ հարցերի ներկայացումով) միջոցառում՝ <<Հետաքրքրաշարժ քիմիա: Հարցեր, փորձեր, պատմություններ>> խորագրով: Պատասխանատուներ՝ նախագծի թիմի անդամ Կ. Ավագյան և ամբիոնի դասախոս Լ.Մելքոնյան:

- Բուհական ուսումնառության գործընթացում ինտեգրացված ուսուցման ներդրման նպատակով թիմի անդամների և այլ դասախոսների կողմից, որպես

կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաներ են հանձնարարվել բուհի տարբեր մասնագիտական բաժիններում: Մասնավորապես՝

Կենսաբանություն մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սահակյան Նազելի - Ինտեգրացված թեմատիկ միավորի ստեղծում <<Ջրոլորտ>> թեմայի վերաբերյալ թեզ: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Գրիգորյան Լուսինե - <<Գեղարվեստական ստեղծագործությունները որպես <<էվոլյուցիոն տեսություն>> թեմայի գիտելիքների յուրացմանը օժանդակող միջոց>> թեզ: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն 4-րդ կուրսի ուսանողուհի Հռիփսիմե Միքայելյան - <<Ջրոլորտը որպես կենսոլորտի մաս>> ինտեգրացված թեմատիկ միավոր և ուսուցման մոտեցումներ ավարտական աշխատանք: Ղեկավար՝ Ն.Ադամյան

- Կենսաբանություն 4-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Ավետիսյան - «Մաթեմատիկայի և կենսաբանության փոխկապակցվածությունը կենսաբանության դասընթացում» կուրսային աշխատանք: Ղեկավար՝ Գ. Օքսուզյան:

- Աշխարհագրություն մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Լուսինե Քերոբյան - <<Ինտեգրացված ուսուցումը որպես <<Բնագիտություն>> դասընթացի դասավանդման նոր մոտեցում>> մագիստրոսական թեզ: Ղեկավար՝ Ա. Ամազարյան

- Աշխարհագրություն մասնագիտության հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Սարգսյան - Ինտեգրացված թեմատիկ միավորի ստեղծում <<Մթնոլորտ>> թեմայի վերաբերյալ ավարտական աշխատանք: Ղեկավար՝ Ա. Ամազարյան:

- <<Կենսաբանության դասավանդման մեթոդիկա>> դասընթացի ծրագրում (դասախոս՝ ծրագրի թիմի ղեկավար Ն.Ադամյան) բակալավրի առկա ուսուցման 3-4-րդ և հեռակա ուսուցման 4-5-րդ կուրսերում, մագիստրատուրա 1-ին կուրսում ներառվել են ինտեգրացված ուսուցմանը նվիրված տեսական ու գործնական հետևյալ թեմաները՝

1)Ինտեգրացված ուսուցման առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները

2) Ինտեգրացված ուսուցման պլանավորման մոտեցումներ

3) Ինտեգրացված թեմատիկ միավորներ

4) Միառարկա և բազմառարկա ինտեգրացված դասերի, միջոցառումների պլանավորում,

5) Ինտեգրացման երևույթը բնագիտական մտածողության զարգացման գործում,

6) Բնագիտական գիտելիքները գեղարվեստական ստեղծագործություններում և ժողովրդական բանահյութսության մեջ,

- Լրացվում են նախագծի աշխատանքներն ամփոփող ձեռնարկի ստեղծման համար անհրաժեշտ նյութերը:

Չորրորդ եռամսյակում՝

- Լրացվել են ձեռնարկի բոլոր գլուխների նյութերը, ամբողջացվել է գրականության ցանկը:

- Հստակեցվել է <<Զուրը գիտելիքների խաչմերուկում>> ուսումնամեթոդական ձեռնարկի կառուցվածքը, բովանդակությունը:

- Մասնագիտական խմբագրման են ենթարկվել բոլոր գլուխները:

- Ձեռնարկը գրախոսվել է ԿԳՆ ԿԱԻ մանկավարժական կադրերի վերապատրաստման և ատեստավորման բաժնի վարիչ Վաղարշակ Ոսկանյանի և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի դոցենտ, ֆակուլտետի գիտ. քարտուղար Աննա Կարապետյանի կողմից և ստացել տպագրության երաշխավորություն:

- Ձեռնարկի նախնական տարբերակը հանձնվել է ՇՊՀ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրենին՝ սրբագրման, մակետավորման, խմբագրման և տպագրման գործընթացները կազմակերպելու համար:

- Ներկայումս բուհը կազմակերպում է ուսումնամեթոդական ձեռնարկի սրբագրման, մակետավորման, խմբագրման և տպագրության աշխատանքները:
Տպագրված ձեռնարկի օրինակներ տրամադրվելու են բուհի գրադարանին և բոլոր ամբիոններին:

- Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար 09.04.2018 ին կազմակերպվել է գիտական սեմինար-զեկուցում <<Ինտեգրացված ուսուցումը որպես կրթության նորացման ճանապարհ>> թեմայով:

Ծրագրի աշխատանքների իրականացման համար բուհի կողմից ապահովվել են կանոնավոր ամենամսյա վճարումներ:

Որպես եզրափակում, նշեմ, որ ծրագիրը ամբողջությամբ չի սպառել իր հնարավորությունները: Նպատակահարմար ենք գտնում այն շարունակել նաև 2-րդ փուլով, բուհում ծրագրի արդյունքների արդյունավետ ներդրմանը օժանդակելու, դասավանդող դասախոսներին մոնիթորինգային օգնության ապահովման, վերապատրաստման համար:

Հրատարակվող ձեռնարկի նյութերը տեսական, գործնական և մեթոդական հիմք են ծրագրով նախատեսված թեման բուհի ամբիոններում մանկավարժություն և բոլոր առարկաների դասավանդման մեթոդիկա դասընթացներում հաջողությամբ և հեշտությամբ ներդնելու համար: Սակայն, կարծում ենք, որ, բացի տեսական հիմքի ապահովումից, գործընթացի հաջողության երաշխիքը առաջարկվող թեմայի վերաբերյալ շահագրգիռ մասնագետների մասնագիտական ու մեթոդական

գիտելիքների հարստացումն է, գործնական հմտությունների ձևավորումն ու զարգացումը, ձեռնարկից օգտվելու հնարավորությունների ուսուցումը: Ինչը մեր կարծիքով առավել օգտակար է ոչ այնքան ինքնակրթության, որքան վերապատրաստման դասընթացների կազմակերպման միջոցով, ինչի համար ակնկալում ենք բուհի ղեկավարության գործուն օժանդակությունը:

«Բնագիտական առարկաների «Դասավանդման մեթոդիկա»
դասընթացի ծրագրերի բարելավում՝ «Ինտեգրված թեմատիկ
միավորներ» թեմայի ներառումով» թեմայի ղեկավար՝ Նելլի Ադամյան
կ.գ.թ., դոցենտ

14.04.2018

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

22. հունիս 2018, № 33.7/5

2017Թ.-Ի ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ `«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԵՄԱՏԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐ» ԹԵՄԱՅԻ ՆԵՐԱՌՈՒՄՈՎ» ԹԵՄԱՅՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 6-րդ ենթակետով՝ ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Նշելով, որ լրիվությամբ կատարվել են 2017 թվականի դրամաշնորհի շրջանակում նախատեսված աշխատանքները, ընդունել հաշվետվությունը, այն գնահատել դրական:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ՝ ԵՐ. ՍԵՐՈԲՅԱՆ